ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2025

Սիրելի՛ հայրենակիցներ

Շնորհավորում եմ բոլորիս մեր պատմության ամենանշանակալի տոներից մեկի՝ Հանրապետության տոնի կապակցությամբ, որը նշում ենք այսօր:

Հայաստանի առաջին հանրապետությունը, որը ծնվեց Մայիսյան հերոսամարտերում, մեզ համար դարձավ պետականություն ունենալու վեհ ու դարերով երազած նպատակի իրագործման հիմնաքարը: 1918 թվականի մայիսը հայ ժողովրդի անպարտելի ոգու, ազատության համար պայքարի խորհրդանիշն է, ու այդ դժվարին և վճռորոշ օրերին, մեր պապերը կարողացան ոչ միայն դիմանալ ու հաղթել, այլև ինքնիշխան հայկական պետականություն ստեղծել: Այն մեզ սովորեցրեց, որ նույնիսկ ամենամութ ժամանակներում միասնությունը և հայրենի հողի համար զոհաբերությունը, վճռականությունը կարող են հանգեցնել ազատության: Մենք հպարտանում ենք այդ հաղթանակներով ու Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսների անուններով:

Տոնը հիշեցնում է նաև սրբազան պարտականության մասին մեր երկրի նկատմամբ՝ ամրապնդել և զարգացնել Հայաստանը, պահպանել նրա անկախությունն ու ինքնիշխանությունը, հոգատարությամբ վերաբերվել ազգային արժեքներին և պատմական հիշողությանը:

Թո՛ղ Մայիսի 28-ը դառնա առիթ՝ վերահաստատելու մեր միասնական կամքը, հայրենասիրությունը և պատրաստակամությունը՝ կառուցելու ուժեղ, ապահով և անվտանգ Հայաստան:

Շնորհավո՛ր Հանրապետության տոնը, խաղաղություն, առողջություն, ապագայի հանդեպ վստահություն և բարեկեցություն եմ մաղթում բոլորիդ: